



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 21 » 06 2021թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0107-21

Ձեռնարկողը՝

«ՄԻՄԱԳ» ՓԲԸ

ք. Երևան, Եղ. Թադևոսյան 72, բն.10

Գործունեությունը՝ Սիլիկյան թաղամասի 10-րդ փողոց, 85 հասցեում նախատեսվող սիլիցիումի երկօքսիդի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկարգություն

ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ



թիվ ՔՓ 0107-21  
<21> 06 2021թ.

**Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 10-րդ փողոց  
85 հասցեում նախատեսվող սիլիցիումի երկօքսիդի  
արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն**

Ձեռնարկող՝ «Սիմագ» ՓԲԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/  
Գործունեության տեսակը՝ Ա կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ ք. Երևան

**Ներածական մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 3-րդ կետի ե) ենթակետի՝ «անօրգանական թթուների կամ ալկալիների և այլ նյութերի արտադրություն» դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեությունը նախատեսվում է կազմակերպել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի արդյունաբերական հանգույցում, 10-րդ փողոց 85 հասցեում՝ կաթսայատան տարածքում: Տարածքում առկա է նաև քարամշակման արտադրամաս, որը ներկայում չի գործում և «Սիմագ» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ և հողամասի սեփականատիրոջ հետ վարձակալության պայմանագիր կնքելուց հետո նախատեսվում է ապամոնտաժել: Նախապատրաստման փուլում բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերումից հետո, Ընկերության կողմից նախատեսվում է գնել տարածքը: Հողամասը զբաղեցնում է 4140մ<sup>2</sup> մակերես, որում արտադրության կազմակերպման համար շինության մակերեսը կազմում է 983 մ<sup>2</sup>: Տարածքի հարևանությամբ առկա է գործող բետոնահանգույց և տարբեր պահեստային շինություններ: Մոտակա՝ Հաղթանակ թաղամասի ամենամոտ բնակելի տները տարածքից գտնվում են 620 մ հեռավորության վրա:

**Նկարագրական մաս:** Գործունեությունը իրականացվելու է գոյություն ունեցող արտադրական շինությունում, նոր շենք-շինության կառուցում չի նախատեսվում: Շինությունում իրականացվելու է վերանորոգման աշխատանքներ և սարքավորումների տեղադրում: Ներկայացվող գործունեության նախապատրաստման փուլում Ընկերությունն օգտվելու է առկա ենթակառուցվածքներից՝ տարածքի ջրամատակարարումը ներկայում իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության քաղաքային ջրամատակարարման ցանցից, իսկ էլեկտրամատակարարումն իրականացվում է «ՀԷՏ» ՓԲ ընկերության ցանցից: Տարածքում կոյուղու բացակայության պատճառով արտահոսքերը ներկայում հավաքվում են կեղտաջրերի հավաքման հորում ու պարբերաբար տեղափոխվում



քաղաքային կոյուղու համակարգ: Հետագայում, Ընկերությունը քաղաքապետարանի հետ համաձայնեցված նախատեսվում է կառուցել կոյուղու կոլեկտոր, որով արտադրական տարածքից կենցաղային կեղտաջրերը կմիանան քաղաքային կոյուղու ցանցին: Արտադրության կազմակերպման համար գազի պահանջարկ չի լինելու և ջերմային պրոցեսները, ինչպես նաև շենքերի ջեռուցումը, նախատեսվում է իրականացնել էլեկտրական եղանակով:

Նախատեսվող գործունեության արտադրանքը՝ 4N և ավելի մաքրությամբ սիլիցիումի երկօքսիդն է  $/\text{SiO}_2/$  (որի խտությունը՝  $2.65\text{գ/սմ}^3$  է, հալման ջերմաստիճանը՝  $1728^\circ\text{C}$ , եռման կետը՝  $2590^\circ\text{C}$ ): Այն նախատեսված է կիրառելու՝ որպես մոնոբյուրեղներ ուլտրաձայնային գեներատորներում և ձայնային վերարտադրող սարքավորումներում, որպես սպիտակ մուր՝ ռետինի արտադրության մեջ և որպես թանձրացուցիչ հավելանյութ՝ քսանյութերի, սոսինձների ներկերի մեջ:

«Սիմագ» ՍՊ ընկերության կողմից, որը հանդիսանում է մասնագիտացված տեխնոլոգիական կազմակերպություն, սիլիցիումի երկօքսիդ արտադրելու նպատակով դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ և տարբեր տեխնոլոգիական լուծումներ, որոնց դրական և բացասական կողմերի վերլուծության արդյունքում հաշվի առնելով բնապահպանական գործոնը, ընտրվել է քիմիական ռեագենտների կիրառմամբ գերմաքուր սիլիցիումի երկօքսիդի արտադրությունը, որով բացառվում է այրման գործընթացը:

Ընկերության կողմից սիլիցիումի օքսիդի արտադրության համար նախատեսված տարածքում ֆոնային աղտոտվածության մակարդակը պարզելու նպատակով իրականացվել են աղմուկի չափումներ և օդային ավազանում փոշու  $/\text{կախված մասնիկներ}/$ , ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի պարունակության չափումներ՝ երեք կետերում  $/\text{նախատեսվող արտադրության տարածք, դեպի Հաղթանակ և Սիլիկյան թաղամասեր ուղղություններով}/$ , հիմնականում արտանետումները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, սակայն արտադրության համար նախատեսված տարածքում և դեպի Հաղթանակ թաղամասի ուղղությամբ փոշու պարունակությունը եղել է ավելի բարձր՝ պայմանավորված քարհանք տանող ավտոճանապարհով հանքանյութերի տեղափոխման հետ:

Ընկերության կողմից կազմակերպվելու է 6000տ/տարի արտադրողականությամբ 4N և ավելի մաքրության սիլիցիումի երկօքսիդի արտադրություն, որի համար հումք է հանդիսանում 95%-անոց մաքրությամբ սպիտակ ավազի փոշին, որը պատրաստի վիճակում նախատեսվում է գնել Վայք քաղաքի մոտակայքում գործող կվարցիտների հանքավայրից: Տեխնոլոգիական գործընթացի համար քիմիական ռեագենտներ կհանդիսանան աղաթթուն և կաուստիկ սոդան, որոնք արտադրվելու են հենց տեղում՝ Ավանի հանքի աղի հումքով: Քարաղը նախատեսվում է գնել «Ավանի աղի կոմբինատ» ՓԲ ընկերությունից: Այն տեղափոխվելու է հատուկ պարկերով՝ կազմակերպության բեռնատար մեքենաներով: Ընդհանուր 120 տ/տարի հումքի համար կպահանջվի 24 երթ, միջին ամսական՝ 2 երթ: Քարաղի  $/\text{NaCl}/$  ջրային լուծույթից էլեկտրամեմբրանային եղանակով ստացվում է կաուստիկ սոդայի  $(\text{NaOH})$  և աղաթթվի  $(\text{HCl})$  լուծույթներ: Այս գործընթացը կատարվում է փակ ցիկլով մթնոլորտային ճնշման տակ:

Սպիտակ ավազը բնորոշվում է որպես բարձր մոնոհանքայնությամբ և սիլիցիումի երկօքսիդի զգալի պարունակությամբ նյութ: Այն ստացվում է կվարցիտային հանքաքարի մանրացման և զտման արդյունքում: Ավազի տեղափոխումն իրականացվելու է մասնագիտացված տրանսպորտային կազմակերպությունների բեռնատար մեքենաներով՝ պլաստիկ պարկերով, յուրաքանչյուր պարկում 30 - 50 կգ

